ՄԱՄՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Armenian Helicopters-ը և DRON-ը միավորում են ուժերը արդյունաբերության և ենթակառուցվածքների համար ավիացիոն լուծումների զարգացման նպատակով:

Ք. Երևան, Հայաստան | 7 Ապրիլ 2026 թ.

DRON LLC-ն և Armenian Helicopters LLC-ն գործընկերության շրջանակում համատեղ հայտարարում են DRON-ի գործունեության մեջ Armenian Helicopters-ի ռազմավարական ներդրման մասին՝ ինտեգրված ավիացիոն լուծումների զարգացման նպատակով:

Ներդրումն ուղղված է համագործակցության զարգացմանը այն ոլորտներում, որտեղ ուղղաթիռների և անօդաչու թռչող համակարգերի հնարավորությունները փոխլրացնող են: Համագործակցությունը թույլ է տալիս պատվիրատուներին առաջարկել համապարփակ և ընդլայնված ծառայություններ՝ ներառյալ տեխնիկական զննում, աերոֆոտո և տեսանկարահանում, տվյալների հավաքագրում, ենթակառուցվածքային աջակցություն և հատուկ նշանակության առաքելություններ:

Անօդաչու թռչող համակարգերի և ուղղաթիռային հարթակների համակցված կիրառումը հնարավորություն է տալիս ընդլայնել առաքելությունների շրջանակը և ապահովել առավել արդյունավետ գործունեություն բարդ և բազմազան միջավայրերում:

Ընկերությունները վերահաստատում են, որ անվտանգությունը, կարգավորող պահանջների խստիվ պահպանումը և գործառնական կառավարումը մնում են իրենց գործունեության հիմքում: Ընկերություններից յուրաքանչյուրը շարունակում է գործել ավիացիոն կանոնակարգերի, տրամադրված գործառնական թույլտվությունների և սեփական անվտանգության ու ռիսկերի կառավարման համակարգերի շրջանակում:

Գործարքը չի ազդում ընկերությունների անհատական պատասխանատվության վրա՝ իրենց գործունեության, անձնակազմի, սերտիֆիկացիայի, տեխնիկական սպասարկման, անվտանգության վերահսկման, պայմանագրային պարտավորությունների և կարգավորող պահանջների նկատմամբ: Յուրաքանչյուր ընկերություն պահպանում է իր անկախ կառավարումը և գործառնական վերահսկողությունը:

Armenian Helicopters-ի մասին

***Armenian Helicopters**-ը Հայաստանի միակ կոմերցիոն ուղղաթիռային օպերատորն է, որն ունի ուղղաթիռ շահագործողի վկայական (AOC № 067), տրված ՀՀ Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի կողմից: Ընկերությունը գործում է միջազգային ստանդարտներին (EASA) համապատասխան և իրականացնում է կոմերցիոն և մասնագիտացված ավիացիոն գործունեություն: Ընկերության ուղղաթիռների պարկը ներառում է Airbus H125 (AS350 B3e) և Robinson R66 Turbine ուղղաթիռները, որոնք շահագործվում են ընկերության Ձրվեժում տեղակայված բազայից: Armenian Helicopters-ը ծառայություններ է մատուցում պետական, արդյունաբերական և կորպորատիվ հաճախորդներին՝ հանքարդյունաբերության, էներգետիկայի, ենթակառուցվածքների, մեդիայի և արտակարգ ծառայությունների ոլորտներում՝ իրականացնելով ուղևորափոխադրումներ, օդային աշխատանքներ, զննություններ, նկարահանումներ և հատուկ առաքելություններ Հայաստանում և տարածաշրջանում:*

https://armheli.com | info@armheli.com

DRON-ի մասին

***DRON**-ը Հայաստանի առաջին արդյունաբերական դրոնների օպերատորն է, որը մատուցում է օդային նկարահանումների, զննությունների, չափագրության և մոնիթորինգի ծառայություններ: Ընկերությունը սպասարկում է շինարարության, էներգետիկայի, հանքարդյունաբերության, գյուղատնտեսության, բնապահպանության, ենթակառուցվածքների և հանրային անվտանգության ոլորտները՝ նպաստելով կազմակերպությունների գործունեության պլանավորման, կառավարման արդյունավետության և անվտանգության բարելավմանը:*

https://dron.am | info@dron.am